ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԵՆԹԱՇՐՋԱՆ

Զբաղեցնում է Դեբեդ գետի միջին հոսանքը:

Միջնադարյան պատմամշակութային հուշարձաններով ամենահարուստն է ողջ Հայաստանում:

Կողմնորոշումը դյուրացնելու նպատակով վիմագիր արձանագրություններ ունեցող բնակավայրերը ներկայացվել են Ալավերդի-Սանահնից Դեբեդի աջ ափով մինչև Շնող. ձախով՝ Ճոճկան-Կարմիր Աղեկ և ապա՝ Մարցի ձորահովիտը:

ԱԼԱՎԵՐԴԻ

Անցյալում զանազան անուններ կրող այս բնակավայրը հայտնի է նաև Մանից գոմ, Մաղան, իսկ XVII դարի սկզբից՝ մի ցեղապետի անունով՝ Ալահվերդի: Դեբեդի ձախափնյա կիրճերում ծվարած հնամենի այս գյուղը մեծապես տուժել է հատկապես 1795 թ. Աղա Մահմեդի սրընթաց արշավանքի ընթացքում. երբ ավերվել են պղնձագործության կենտրոնները, կոտորվել բնակչությունը, կոտրտվել-պղծվել հուշարձանները:

Քաղաքն աղքատ է հին հուշարձաններով: Բայց մեծ արժեք է ներկայացնում Սանահնի կամուրջը, որը կամարում է Դեբեդ գետը քաղաքի հարավային եզրում, դեպի Սանահին տանող կեռմանաշատ հնագույն ճանապարհի վրա: Ճարտարագիտական այս նշանավոր շինությունը կառուցել է Զաքարյան եղբայրների քույր Վանենին՝ իր ամուսին Կյուրիկյան Աբաս թագավորի հիշատակին, պրոֆեսոր Կ. Ղաֆադարյանի կարծիքով 1192 թ. հետո, նույն տասնամյակում, կողակցի մահից ոչ շատ ուշ:

Սանահնի կամուրջը Հայկական լեռնաշխարհի կամրջաշինության փայլուն օրինակներից է: Միաթռիչք կառույցի աջ խելը հենված է բարձրադիր ամրակուռ ժայռին, իսկ ձախը՝ թեքադիր անցումով կառանված է հողե զանգվածին: Եվ, քանի որ այս թևում թեքությունը բավականին մեծ էր, ուստի այն հետագայում բարձրացվել է հողե լիցքով՝ ավտոմեքենաների երթևեկն ապահովելու համար՝ որպիսի միջոց կիրառվել է հատկապես Սյունիքում: Կամրջի եզրակողերով անցնում են քարակերտ բազրիքներ՝ վրան մեկնված պահպանիչ առյուծների բարձրաքանդակներով: Կամրջի ձախ անկյունում կանգնեցվել է խաչքար՝ այն կառուցելու վերաբերյալ արձանագրությամբ: Խաչքարը ջարդել են Աղա Մահմեդի հրոսակները 1795 թ.՝ անհետ կորստի մատնելով շատ կարևոր սկզբնամասը (այս մասին տեղեկացնում է Սանահնի Քոթուկում Հովսեփի արքեպ. Արղությանցի թողած գրությունը): Խաչքարի ներքին՝ մեծ մասն այժմ գտնվում է Սանահնի վանքում:

Սանահին տանող նոր ճանապարհի կառուցումից հետո հարկ եղավ հեռացնել արված լիցքը՝ վերաբացելով հուշարձանի իրական պատկերը: Այս ձեռնարկման շնորհիվ բացվեց նաև կամրջի վերանորոգման վերաբերյալ 1888 թ. արձանագրությունը, որը ներկայացվում է ստորև:

1. ԽԱՉՔԱՐ. կամրջի մոտից տեղափոխված Սանահնի վանք, թիկունքին 12 տող.

...[Ա]ՋԳԻՆ ԲԱ-
ԳՐԱՏՈՒՆԵԱՑ: ԵՍ՝ ՎԱՆ-
ԵՆԻ, ԴՈՒՍՏՐ ԻՇԽԱՆԱՑ ԻՇ-
ԽԱՆՆ ՍԱՐԳՍԻ, ՈՐԴՈ ՁԱՔԱՐ-
ԷԻ, ԿԻՆ ԱԲԱՍԱ ԹԱԳԱՒՈՐԻ
ՈՐ ԿԻՍԱՒՐԵ ՎԱԽՃԱՆԵԱԼ ԽԱ-
ՒԱՐԵՑՈՅՑ ՁՄԵՋ, ՇԻՆԵ-
ՑԻ ՁԿԱՄՈՒՐՋՍ ԵՒ ԿԱՆԳՆԵ-
ՑԻ ՁԽԱՉՍ ՅԻՇԱՏԱԿ
ՆՄԱ ԵՒ ՄԽԻԹԱՐ ԻՆՁ, ԵՒ Ի ԿԵ-
ԱՆՍ ՃՆՈՂԱՑ ԵՒ ԵՂԲԱՐՑ
ԻՄՈՑ: ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ ՅՍ:

Հրատ. Ձալալյանց, Ա, 38, «Արծագանք», 1884, 631, Հարությունյան, 309, Հայապատում, 472, ՎՏ, 41, Մովսեսյան, 72-73, Մառ, ԽԲ, տ. IV, ՝ԽԻ. II, 1915, Օրբելի, 452, Ուղեգրություններ, Ձ, 41-42, Ղաֆադարյան, Սանահին, 185:

Ծանոթ. Խաչքարի վերնամասը կոտրված, կորած է, որի վրա եղել է արձանագրության սկիզբը: Հարությունյանն այդ մասում կարդացել է *սուրբ տերունական,* որն անհարիր է բնագրին: Ձալալյանցը կորած մասը լրացրել է *կամաւն Աստուծոյ ես Նանաէ յազգէ* բառաշարքով, որն ընդունվել է այլոց կողմից, բայց այն շտկել է դեռևս Մառը: Հստակ և աներկմիտ է արձանագրության հաղորդումը. կամուրջը շինել է Վանենին՝ *դուստր իշխանաց իշխան Սարգսի, որդո Ձաքարէի, կին Աբասա թագաւորի:* Նույնը կրկնում է Գանձակեցին՝ Վանենուն կոչելով Նանա: Նա գրում է, որ Աբաս Կյուրիկյանը «առնու իւր կին զդուստր Սարգսի բարեպաշտ իշխանի, որդւոյ Ձաքարիայ, որդւոյ Վահրամայ, զքոյր մեծամեծ իշխանացն Ձաքարէի և Իւանէի, Նանայ անուն»[13]: Ձալալյանցը խառնել-միացրել է արձանագրության և պատմիչի տեղեկությունները, կատարել է հավելումներ, բացթողումներ, սրբագրումներ՝ գրեթե անճանաչելի դարձնելով բնագիրը: Նա ոչ միայն *Վանենին Նանա* է կարդացել, այլ նաև 6-րդ տողի *որ կիսաւրե վախճանեալ*-ը՝ *որ վախճանեցաւ ի Կեսարիայ* (այսինքն ոչ թե երիտասարդ հասակում է մահացել, այլ Կեսարիա քաղաքում):

Նույնը կրկնել կամ ավելի են խճողել հետագա հրատարակիչները: Դրանք խնամքով շտկել է Կ. Ղաֆադարյանը, ճշտել կամրջի շինարարության ժամանակը՝ ելնելով այն բանից, որ Աբասի մահը համարվում է 1192 թ.,[14] իսկ կամուրջը Վանենին կառուցել է նրա մահից անմիջապես հետո:

---

[13] *Կիրակոս Գանձակեցի,* էջ 152:
[14] *Մովսեսյան,* Լոռիի Կյուրիկյան թագավորության պատմությունը, Վիեննա, 1923, էջ 71:

2. ՍԱՆԱՀՆԻ ԿԱՄՈՒՐՋ. ձախակողմյան՝ հյուսիսային թևի վրա, ներսի կողմից, 7 տող.



ԹԼՎԻՆ ՀԼԱՅՈՑ ՌՅԼԷ (1888) ԿԱՄՐՋԻՍ ՁԱ-
ԽԱԿՈՂՄԵ ԼԱՆ ԽԱԽՏԵԼ ՀԻ-
ՄՔՆ ԵՒ ՈՐՄՈՒՆՔՆ ՎԵՐՍ-
ՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԱՆ ԻՍԿԱ-
ԿԱՆ ԱՐԴԵՍԲՄԲ ՍԼԱԽԼԱՀՆԵՑԻ
ԹԱԴԷՈՍ ՔԼԱՀԼԱԽԼԱՅԻ ԵՐՈՒԱՆ-
ԴԵՆՑ Ի ՅԼԻՇԼԱՏԼԱԿ ԻՒՐ ՃՆԼՈՂԼԱՑ:

Ծանոթ. Հյուսիսային՝ սրընթաց ցած իջնող խելը լցվել է հողով՝ տրանսպորտային շարժման նպատակով: Սանահին տանող նոր ճանապարհի գործարկումից հետո կամուրջը բերվել է իր նախկին տեսքին, որի ընթացքում էլ՝ 1977 թ. բացվել է այս՝ վերստին նորոգելու մասին արձանագրությունը:

Հայտնի է դառնում, որ կամուրջը նորոգվել է նաև անցյալում, 1888 թ. առաջ, բայց ե՞րբ, ի՞նչ պարագաներում՝ մնում է անհայտ, քանի որ այդ մասին գրավոր հիշատակություններ չեն հասել մեզ:

3. ԽԱՉՔԱՐ. Կարի ֆաբրիկայի պահեստի մեջ, խաչաթագի կողքերին 1 տող (XIII դ.).



ՄԲ ԱԼՄԵՆԱՅՓՐԿԻՉ:

Ծանոթ. Խաչքարը զուրկ է պաճուճանքից, կողերի զույգ կիսասյուները կամարաղեղով, հիշեցնում է Հաղբատի դպրոցը: Ակնախաչում «դրոշմված» է խաչ՝ իբրև վկայություն խաչելության, որի գաղափարի համալրումն է և թագավորությունը՝ խաչքարին վերապահելով Ամենափրկիչի գործառությունը՝ առանց խաչելության պատկերագրության:

ՍԱՆԱՀԻՆ

Նշանակալից բնակավայր է եղել դեռևս չորս հազար տարի առաջ: Տեղի դամբարաններից 1871 թ. Ա. Երիցյանի հայտնաբերած խիստ հազվադեպ ու յուրահատուկ խե-